Բագուի պատմութեան մէջ յիշուած խանները անուանւում են Շիրուանի խան. զոր օրինակ՝ 1760 թուից երեւում են Մուհամմատ Սայիտ խան Շամախու, Հիւսէյին խան Զրվանու[1]) Աղասի խան Զրվանու, – Մուստաֆայ խան Զրվանու, և այլն. և այս խանութիւնը սկսւում է 1500 թուից. ըստ որում նրանից յառաջ Շիրվան շահի իշխանութիւնն էր, որ սկսուել էր, ինչպէս երեւում է, Աղուանից իշխանութեան անկումից յետոյ՝ Լանկթամուրի աւերումից և ամբողջ Աղուանստանը դերի տանելուց զկնի 1300 թուականից։

Տփխիսեցի շնորհունակ սարկաւագ Մարտիրոսի Անտոնեան պատկանեալ ձեռագիր բժշկարանի սկզբում եղած ցանկից յետոյ՝ գրուած է ուրիշ գրչով՝ հետեւեալ տեղեկութիւնքն Շամախուոյ անցեալ դրութեան համար, 1774 թուէն, որը արտագրեցի 1894 թուի յունիսի 15ին Տփխիս քաղաքումն, որպէս երեւի մի Շամախեցի վաճառականի գրած է և է այսպէս.

«Թվ 1789 մարտի 28 Փաթալի խանն սատկեց. և ապրիլի 6ումն իւր որդին խան նստեց Շամախի, և յունիսի 27 ումն Շաքուայ Մահմատ Հասան խանն եկաւ, Փաթալի խանի որդի Ահմատ խանն փախաւ յուլիսի մէկումն, Շամախի Մանաֆ խանն՝ խան նստեց. և յուլիսի 24ումն Սարդարի որդիք Մուստաֆայ բէկն, և Գասում բէկն, մտան քաղաք, Մանաֆ խանին սպանեցին և իւրեանք տիրապետեցին երկրին ամենայն և օգոստոսի 2ումն Ասկար խանն մտաւ քաղաք և 7ումն ուզբաշի Մուսայ պէկին և Օմար պէկին բռնեցին։

«Թվն 1774 մայիսի 2 Շամախին թարաշ եկաւ. յուլիսի 27 քաղաքն քօչեց գնաց Բասխալ, և սեպտեմբերի 14ումն քաղաքն եկաւ Աղսու[2])։

«Թվ. 1778 մարտի 16ումն Շամախուց ըռէյ ելանք և 20

---

[1]Ցիշեալ երկու խաներն երեւում են 1760 թուին՝ «Գիւան Հայոց պատմութեան» անունով գրքի մէջ, առ որս գրեց Սիմէոն կաթուղիկոսն ամենայն Հայոց՝ Աղուանից Յովհաննէս կաթուղիկոսի համար։

[2])Բասխալ և Աղսու գիւղերը կան նոյն անունով։